ՌԱՖԱԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ

Բանաստեղծություններ

aegitas

Ռափայել Պատկանյան
Բանաստեղծություններ

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24429798
Բանաստեղծություններ:
ISBN 9781772467024

Аннотация

Պատկանյանի մոտ 50 մանկական բանաստեղծությունների մեծ մասը սերտորեն առնչվում էր իր պոեզիայի ընդհանուր մոտիվներին, ելնում հայրենասեր քաղաքացի դաստիարակելու նպատակադրումից: Օրինակ, «Օրորոցի երգը» բանաստեղծության մեջ հոգնատանջ մայրը հրավիրում է զանազան թռչունների: Պատկանյանը պահանջում էր մարտական դաստիարակություն, որովհետեւ ըստ նրա երեխան պետք է դառնար հայրենասեր, հայրենիքի մարտիկ: Պատկանյանի հասարակական – քաղաքական հայացքների հետ անմիջականորեն կապված «Մեծ» եւ «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունները վաղուց մտել են մանկական գրականության շարքեր: «Արաքսի արտասուքը» բանաստեղծության մեջ ոտանավորի իմաստը թանձրացվում է Արաքսի ափերով քայլամոլոր շրջող հեղինակին Արաքսի կողմից տրված պատասխանում: Այստեղ Պատկանյանի խոհն արտահայտում է վշտահար Արաքսը, որ պատմում է իր «բյուրավոր ցավերը», հիշում անցյալի փառավոր օրերը: Ջուտ մանկական բանաստեղծություններից ուշագրավ

են Պատկանյանի «Ճար», «Գութ», «Ձմեռ», «Պտուղներ» ստեղծագործությունները, որտեղ հեղինակը դրսեւորում է իր ամբողջ հումանիզմը եւ մտահոգությունը հայ ազգի ճակատագրի նկատմամբ: «Պտուղներ» ոտանավորի մեջ պտուղներն ակամա հիշեցնաում են նան հայրենիքը: Սոցիալական խնդիրներին անդրադարձող «Ձմեռ» եւ «Ներ տարի» ոտանավորներում Պատկանյանը մանկան զվարճության կողքին հիշում է նաեւ նրա կարիքավոր լինելը: Պատկանյանը շարունակում է Աբովյանից սկսվող լուսավորության եւ ուսման թեման: Այդպիսիք են «Ամենամեծ անբախտություն», «Խելոք երեխան», «Ժրաջան տղան», «Վարժատուն» բանաստեղծությունները:

Содержание

ԶԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ 5
ՇԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԵՐԳԸ 11
ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԳԸ 13
ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ 15
ՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ 18
ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԵՆ 19
ԻՄ ՔՆԱՐԻՆ 22
ԻՄ ԵՐԳԸ 23
ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ 25
ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ 28
ԱՂԵՆ ՏԱ՞ՆՆ Է 30
ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ 32
ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ 35
ՆԿԱՐԻՉ 40
Конец ознакомительного фрагмента. 42

Ռաֆաել Պատկանյան
Բանաստեղծություններ

ԶԱՐՄԱՅՐ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Ամպը եկավ ծածկեց սարերն ու ձորեր,
Չէր տեսնվիլ պատերազմի դաշտերը,
Մեգ մառախուղ կիջներ Իդա լեռներեն,
Գիշերային մութը պատեց դիերը:
Հյուսիսային հողմը փչեց սաստկագին,
Հազարամյա կաղնին շարժեց դողացուց,
Ամպի միջեն փայլատակեց փայլակը,
Ակոսի պես պատռեց խավար երկինքը,
Դիակներու հրոնչյունը չէր լսվիր,
Քամին հեռու կտաներ սաստիկ փչելով,
Ամպի գոռալն կդղրդեր երկիրը,
Մրրիկ, կայծակ խառնակված էր օդումը:
Հեռվանց կու գայր լաց ու սգո ձայները,
Տրոյացվոց և կամ հունաց բանակին,
Ամենեքյան յուրյանց մեռելն կ'պտռեն,
Այն չար օրը շատ կոտորվածք էր եղել:
Ճրագներով, լապտերներով կու պտռեն,
Մարդոց, որդվոց մարմինները կանայքը,
Ոմանք շալկած կը տանեին մեռելը,
Որն որ առաջ կու գտնեին արյան մեջ,

Ով ուներ տեր կու գտնվեր դիակը,
Դագաղներով կը տանեին այրելու,
Մայրը, քույրը, կինը, դուստրը միասին,
Յուր մեռելի կու տան վերջին պատիվը:

Ամպերու մեջ չկան աստղեր, խավար է,
Սև քող պատյալ սգավոր է երկինքը,
Քամին փչեց լապտերներուն՝ մթնացավ,
Պատերազմի տեղը բռնեց լռություն:
Բայց հեռուեն այն ի՞նչ լույս որ կերևի,
Իդա սարի կողմեն մեկ լույս կը փայլե,
Լույսն անդադար շարժման մեջ է քամիեն,
Այլ կվառվի և չորս կողմը լույս կու տա:
Սարի տակը կու երևի մեկ ճրագ,
Որ լապտերով կախված էր այն կաղնիեն:
Արդյոք ո՞վ կա այն մութ գիշեր այն տեղը,
Երևի որ պտտող չունի, անտեր է:
Կաղնո տակը փռած էր մեկ լայն մորթի,
Կամ առյուծի էր այն, ընձու, կամ վագեր,
Վրեն պառկած էր կարեվեր քաջ զինվոր,
Մահու քրտինք տվել էր բոլոր մարմինը:
Երկու ձեռքով բռնել էր յուր մեկ կողքը,
Կամենում էր յուր արյունը դադարեցնել…
Միտքը բերեց յուր սիրելի Հայաստան:
Հոգվոց հանեց ցաված սրտի խոր տեղեն:
Միտքը բերեց յուր կարոտյալ հայրենին,
Նորոգվեցան յուր խոցերու ցավերը,
Արյունը հորդ բխեց խոր-խոր խոցերեն,
Այլ չմնաց այնուհետև կենաց հույս:

Վեր նայեցավ, տեսավ լուսով լապտերի,
Ծառի ճյուղքեն կախված էր յուր աղեղը,
Կապարճը լի նետյուք ընկած գետինը,
Սուրը մոտն էր, բայց անպիտան՝ յուր տիրոջ:
Մոտը կանգնած էր միայն յուր երիվայր,
Շուտ-շուտ շնչով խըրխնջալով կը փչեր,
Ոտքով հողը փորփըրելով վեր ու վայր,
Յուր տիրոջը ցավոց կլիներ ցավակից:
Առանց ձայնի, առանց լեզվի, որպես թե
Կասեր տիրոջ հավատարիմ կենդանին.
– Մի՛ պառկիր դու այս մութ, խավար դաշտումը,
Մի՛ մնար դու այս կաղնու տակ այս գիշեր:
Վե՛ր կաց, հեծիր շուտ իմ վրեն, ի՛մ իշխան,
Ես կը տանեմ քեզ քո երկիր հայրենի,
Ես չորս ոտքըս կը տարածեմ գետինը,
Կը ցածացնեմ մեջքս, որ դու հեշտ նստիս:
Ես բերնովս կը բռնեմ քո թևիցը,
Կը բարձրացնեմ, կը լինիմ քեզ օգնական,
Մի՛ մնար այս օտար, հեռի երկրումը,
Երթա՛նք հասնինք քո հայրենին Հայաստան:
Ա՛խ քաշեց այն սաստիկ խոցված Զարմայրը,
Հուր բոց բխեց խորոց հոգվույն և սրտին:
Վազեց արյուն լայնաբերան խոր խոցեն,
Խավար մահու պատեց աչքին և սրտին:
– Ասաց՝ արի՛, իմ քաջ ընկեր մտերիմ,
Արի՛, ազնիվ իմ երիվար, իմ նըժույգ,
Ես չեմ կարող մյուս անգամ քեզ հեծնել,
Թամքիդ վերա առաջվա պես այլ նստել:

Ասպանդակիդ այլ չեմ կարող ոտ դնել,
Եվ ոչ ձեռքով սանձդ բռնել մետաքսյա.
Այլ չեմ կարող քեզ հետ շրջիլ սար ու ձոր,
Պիտի մնամ կարոտ կանանչ դաշտերուն:
Քանի՞ անգամ մենք պատերազմ ենք տեսած,
Քեզ հետ մտել, քեզ հետ ողջմամբ դուրս եկած,
Ինձ շատ անգամ ծառայել ես մտերիմ,
Մեկ անգամ ևս կատարյա իմ պաշտոնը,
Մեկ մոտ արի, ա՛ռ իմ հետին ողջույնը,
Սանձդ առնում այդ աներկյուղ քո գլխեն,
Մեկ համբուրեմ արտասվալից աչքերդդ,
Իմ ողջույնս տար հայրենի մեր երկիր:
Գնա՛, դարձի՛ր, շուտով հասիր Հայաստան,
Որուն կարոտ պիտի մընամ այս տեղը
Գընա մեր տուն, Արմավիրին տար համբավ,
Որ չընպասե յուր իշխանի դառնալույն:
Որդվույս տեսնես, ասա՝ չունիս այլ դու հայր,
Հայաստանն է այսուհետև քո ծնող,
Ասա՝ հայոց ձեր նահապետը Զարմայր,
Գետին դրեց յուր երկսայրի սուսերը:
Ասա՝ հայոց ձեր նահապետ Զարմայրը
Ձեռին չունի ահեղ գեղարդ և վահան,
Ասա՝ հայոց ձեր նահապետ Զարմայրը,
Այլ չէ կարող հրրաման տալ յուր զորաց:
Ասա՝ հայոց ձեր նահապետ Զարմայրը,
Չէ առաջնորդ քառսուն հազար բանակի.
Քաջ հայերը ցիրցան եղան դաշտի մեջ,
Ոչ ոք տեսավ յուր իշխանի մեռնելը:
Բայց երբ տեսնես դու նորահարս սևորած,

Որ գրկի մեջ մեկ հատ տղա ունենա,
Որ աչքերեն թափում լինի արտասուք,
Ու դաշտի մեջ պտռում լինի գերեզման,
Ու իմ անունս հիշում լինի անդադար,
Ու երեխին ասում լինի մշտապես,
Թե դու որբ ես ու հայր չունիս աշխարհի,
Այսուհետև քեզ չի ճանչընար Հայաստան.
Այսուհետև դու մի՛ տեսնիր Արմավիր,
Այսուհետև մի՛ հիշիր դու այն օրը,
Որ քեզ իշխան ազգի կոչեց Հայաստան, —
Իմացի՛ր, որ նա իմ կինն է խղճալի:
Մենակ նըրան մի՛ պատմիր դու իմ մահը,
Նա չէ կարող լսել այդ սև համբավը,
Թող չկաթե նորա աչքեն արտասուք,
Թող թաց չանե նա արտասվոք սև հողը:
Նըրան ասա՛, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը օտար երկիր հեռավոր,
Ա՛յլ գեղեցիկ աղջըկան հետ պըսակվեց,
Քեզ մոռացավ, ո՛չ հիշեց քո անունը:
Ասա՛ նըրան, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը Իդա սարի տակումը,
Նըշանածին առավ գիրկը պառկեցավ,
Աչքը խըփեց, քաղցր քնով քնեցավ:
Ասա՛ նըրան, իմ սիրական սիպտակ ձի,
Թե քո մարդը փեսայի պես պառկեցավ,
Հարսանիքն էր Իդա լերին հովտաց մեջ,
Հարսնարանը դիակներով զարդարած,
Առագաստն էր երկնից կապույտ կամարը,
Ճրագները՝ հրեղեն փայլակ և կայծակ,

Անկողինն էր սառն ու խավար գեջ հողը,
Նվագարան՝ ամպոց ահեղ գոռալը:
Մատանին էր լայնաբերան գեղարդը,
Հարսնացուն էր անհաղթելին Աքիլլես,
Փեսավերն էր հին բարեկամ Մեմնոնը,
Եվ հարսնաքույր՝ Պանթազեղե Ամազոն:
Իմ զարդարանք եղավ կարմիր արյունը,
Ողջագուրանք՝ դիոց մահու հրոզնչյուն,
Նշանվեցա սուր սլաքոք նետերու,
Պսակվեցա պողովատիկ սուսերով:

ՇԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԵՐԳԸ

Ա՛յ մարդ, այսօր շուտ քընեցար, ննջեցիր,
Առավոտյան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրեն ծագեցավ,
Ջերմությունը ձորն ու դաշտը փըռվեցավ:

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարին գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Ներստան հանգչիլ կաղնիների հովումը:

Ա՛յ մարդ, վե՛ր կաց, սառը ջրով լվացվի՛ր,
Գոտիդ կապե, գերանդիդ ա՛ռ, դաշտ հասի՛ր,
Քանի հով է՝ հունձըդ արա արտումըդ,
Հունձըդ հընձե, մի՛ ծուլանար գործումըդ:

Խուրձըդ կապե, բարդըդ բարդե, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձըդ կատարի.
Բե՛ր գերանդիդ, կախե՛ պատեն քո տանը,
Ես իրիկվան կը պատրաստեմ սեղանը:

Ա՛ մարդ, հերիք ինչ որ այսօր քնեցար,
Աչքըդ մեկ բա՛ց, տես թե ո՛րչափ ուշացար,
Մեր դրացին վաղ անցկացավ կամուրջեն,

Վաղ լրռել է մեր գգիրը ձայնելեն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քնել, սիրական,
Արեգական շողը հասավ մեր դրրան,
Մի՛ ծուլանար ժամանակդ խնայե՛,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրե:

ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԵՐԳԸ

Մարդըս եկավ, եկավ դաշտից՝ դաշտիցը,
Կանաչ դաշտից, դալար դաշտից տուն եկավ,
Տուն եկավ ու դուռը դըրեց՝ նըստեցավ,
Շալկին խուրձ էր, խուրձ՝ ցորենի արտիցը:
– Խուրձըդ վե՛ր դիր, թո՛ղ բաց անեմ թոկերը,
Մեջքեդ առնում այդ սուր, այդ սուր գերանդին,
Սուր այդ, սուր այդ գերանդիով հնձել ես,
Հընձել ես ու խուրձ կապել ես ցորենը:
Ա՛խ, ճակատըդ թաց է եղել քրտինքով,
Թո՛ղ ճակատըդ, թող որ սըրբեմ իմ ձեռով.
Իմ ձեռովըս գոտիդ բացեմ՝ խուրձըդ առնում իմ ձեռով,
Խուրձըդ առնում՝ ծանըր բեռըդ շալակեդ:
Սառը ջըրով ձեռըդ լըվա՛, ոտքըդ լվա, երեսըդ,
Ձեռքիդ, ոտքիդ ես ջուր կածեմ, երբ լվանաս երեսըդ.
Սըրբե՛ ձեռքով քո երեսեդ քըրտինքըդ.
Գլուխդ լվա՝ սառը ջըրով, ձեռքըդ, ոտքըդ, երեսըդ:
Ես քեզ համար հաց թխեցի, սիպտակ, փափուկ գարեհաց,
Ես քեզ համար պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր,
Գառան մըսեն շամփրի վըրա խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած:
Կուժը լիքը կարմիր գինին դըրած է,

Իմ ձեռագործ կըտավ սուփրան փըռած է.
Ձեռըդ լվա՛. հանգստացի՛ր իմ սիրակա՛ն ամուսին
Լուսնյակը երևում է երկնքումը փայլելով,
Պատուհանեն լույս է ձգել սուփրի վըրա շողալով,
Երևում է հացն ու կաթը, պանիրը,
Երևում է կարմիր գինվո սափորը.
Մեկ ես, մեկ դու, մեկ պահապան հրեշտակը,
Ուտենք, խմենք, ու գոհանանք արարչեն,
Հանգստանանք աշխատանքեն, որ քաշեցինք ցերեկը:

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ

Քընե՛, քընե՛, սիրուն որդի, քու մոր սըրտին ըսփոփանք,
Քեզ օր կասեմ տըխուր ձենով, օր-օր, օրեր ու շատ կյանք:
Օրորոցըդ ձեռով շարժեմ, բերնով երեսդ համբուրեմ,
Քեզ շատ օր-օր, քեզ շատ օրեր, քեզ շատ արև կու երգեմ:
Աչքըդ փակե՛, այդ լուսափայլ աստղի նըման փայլածը,
Որ մինչև այդ երկնքումը երևում է ցոլածը:
Աչքիդ շողը սիրտս է ծակում, նորոգում է իմ խոցը,
Աչքըդ փակե՛, իմ սիրական հերի՛ք սըրտիս այրածը:
Աչքըդ փակե՛, քաղցր քընե՛, քեզ օր կասեմ ես լալով,
Հորըդ բանը իմաց կանեմ, դու ականջ դիր նիրհելով.
Հայրըդ զորեղ երիտասարդ, առավ բակեն գութանը,
Լըծեց երկու զույգ եզները իր սրածայր արորը.
Գընաց դաշտը երգ հնչելով, երգ ասելով և լալով:
– Ինչի՞ համար սուգ ես անում, սուգ արտասվոք և լալով,
Ասաց հորըդ հարևանը՝ աչքեն առուք վազելով.
Եզներըդ գեր, գեր ու պարարտ վազ ի վազ են դեպ դաշտը
Շա՛տ կու վարեն, շա՛տ կու հերկեն, շա՛տ կու կամեն քու արտը,
Արեգակը մայր չի մտած դու կը դառնաս արորեն,
Քեզ Զանանը առաջ կու գա գըրկում բըռնած երեխեն:

Գորգին երգով հարևանին այսպես տվեց պատասխան.

«Եզներրս չեն ինձ մնալու, իմ աչքի լույս հարևան.
Օրավարրս ես չեմ կարող այսօր վերջը հասցրնել,
Պիտի մնա հող ու արտրս անվարուցան, անայցել.
Դիակիս մոտ գեր ու պարարտ իմ եզները վիզը ծուռ
Պիտի մնան, թե ո՞վ նոցա երեկոյին կու տա ջուր»:
Հարևանը աչքը արցունք մեզ սև համբավը բերեց.
Թե՝ շու՛տ արեք, եկեք տեսեք, թե ձեզ Գորգին ի՞նչ արեց:
Ի՞նչ ես արել, գանք ու տեսնենք, վա՛յ մեր անբախտ աչքերուն,
Նետը ցրցված է սրրտիդ մեջ, տակրդ ճապաղ քու արյուն:
Նետը ցրցված քու սրրտի մեջ, օդը ճեղքեց, գիծ արավ.
Գիծը սև էր երկնքումը, աչքրս ծառի մոտ տարավ,
Ծառի հետնեն թաք կեցած էր մեր գեղացվոց թրշնամին,
Մեր գեղացվոց հին ատելին, տավարի գող Եզիդին:

Դու սիրական սիրուն որդի, քրնե՛, քրնե՛, զորանաս,
Քու մոր համար մրխիթարիչ ու ըսփոփիչ մեծանաս:
Միտքրդ պահե քու հոր արտը, գեր ու պարարտ եզները.
Միտքրդ պահե մաճն ու սամիք և սրրածայր արորը.
Երբ մեծանաս, երթաս դաշտը, ուզես վարել քու արտը,
Քու մոր համար ուսով բերել ցորնի խուրձը ու բարդը,
Առաջ գրնա՛, գետը անցիր այն սրրահոս Արաքսեն,
Գրնա՛ գրտի՛ր այն Եզիդուն, որ այն ծառի ետևեն
Նետը քաշեց, օդը պատռեց, քու հոր կյանքը սև արեց.
Թո՛ղ Գորգիի եզները տա, որ այն օրը փախցրրեց:
Գեր ու պարարտ քու եզները սայլի՛ն լծե, սիրական,
Դարձի՛ր սրբե՛ քու մոր աչքեն այս արտասուք տրրտմության:
Քաղցր ձենով երգ հրնչելով, երգ երգելով տու՛ն արի…

Ա՛խ, ե՞րբ կըլնի, որ մեծանաս – իմ բաղձանքը կատարի:
Այժմ քընե՛, աչքդ խըփե՛, հանգստացի՛ր, օր-օր-օր.
Թող քու մայրը աչքեն թափե արտասուքը յուր հորդոր:

ՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ի՞նչ ես ջարդում անձրդ, է՛յ մարդ, ցավերով,
Գլխիդ բարդում գանձրդ անթիվ նավերով.
Արի՛, աղբեր, իմ խրատին դու մի՛տ դիր,
Հոգս ու ջաֆեդ ա՛ռ քեզանից ու ե՛տ դիր:

Մերկ ու թեթև դու էս աշխարհ եկել ես
Բեռան տակը մեջքրդ ինչո՞ւ թեքել ես,
Ժանգ արծաթի խաթրին դու քեզ գերել ես,
Դեղին ոսկու սիրուն հոգվով մեռել ես:

Դիպակ շորեր, անգին քարեր, գանձ ու գահ
Ե՞րբ ես տեսել, որ մարդուս անեն անմահ,
Նահախ պըտրում ես արծաթի մադանը,
Որ արժան է օխտը գազ քու քաթանը:

Էսօր, էգուց քեզ կու գրկե պատանքը
Ու չի փրկիլ մահից ոսկին, ո՛չ հանքը:

ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԵՆ

Ա՛յ իմ չար բախտ, քեզ ի՞նչ ասեմ, արդյոք քեզ ի՞նչ անուն տամ,
Թե կույր ասեմ՝ իրավ կույր ես, բայց այդ դեռ չէ բավական.
Դու անմիտ ես, դու հիմար ես, նախանձոտ ես չափազանց,
Դու աստված չե՛ս, ինչպես կոչեց քեզ հին դարը դյուցազանց,
Կույր է և քո թշվառ կյանքը և այդ պաշտոն տվողը,
Ոչ բախտ, այլ աղբ քեզ չէի տալ՝ պարարտացնել կոշտ հողը,
Այդպե՞ս խըղճով կատարում ես Արամազդա պատվերը,
Ա՛խ, թե իջներ նա երկնիցը, տեսներ առատ հունձերը
Քու այլանդակ սերմնացանին, էլ ի՞նչ սուր-սուր նա սլաքներ
Պիտի շաղ տար քու գըլխին…
Քեզ շատ անգամ ես տեսել եմ երիզապինդ աչքերով,
Կու՞յր ես արդյոք, թե՞ գիտությամբ ման ես գալիս այդ կերպով.
Բայց կուզեի, որ դու մեկ օր հանգամանքե ըստիպված՝
Այս աշխարհքը ծայրե ի ծայր մեկ ժուռ գայիր աչքաբաց,
Ի՞նչ ահարկու տեսարաններ պիտի բացվեր քո աչքին
(Ցընորամիտ արարքովըդ լի են երկիր ու երկին). —
Կը տեսնեիր մոլի վագրեր հովիվ դրած հոտերուն,

Նենգ աղվեսներ, անհագ գայլեր միշտ անպակաս մոտերուն.
Կը տեսնեիր դու ժիր մեղվանց բունը՝ արջի քանդելը,
Բյուր մի անմեղ միջատների հացը՝ ծույլի ուտելը.
Կը տեսնեիր դու վարուժան մենակ վու՛-վու՛ն կարդալիս —
Նա իր սիրուն աղունակի կարճիկ կյանքիկն է լալիս,
Ամպի մեջեն վեր սլացավ սըրաչ շահեն դեպի ծառ,
Բռնեց սիրուն աղունակին, անխիղճ արավ չորս պատառ:
Թողնենք մի կողմ անբաններին՝ բանականի մեջ մտնենք,
Նույն զըրկանքը, նույն նեղություն անշուշտ, և հոն կըգտնենք,
Տե՛ս դու, թշվառ հողագործի գարնանային վաստակը —
Լափլիզեցին մարախները ցորնու նործիլ հասակը.
Դորա ներհակ՝ նավահանգիստ մտավ նավը փարթամին,
Ո՛չ մի վնաս չի հասցրուց նորան ուռուցիկ քամին:
Տե՛ս այս խղճուկ իմ կըտրիճիս – առույգ, պարկեշտ ու գիտուն,
Բայց հորական փող չունելով՝ հաճելի չէ՛ ամենուն.
Սորան հավասար չեն հարգում իշխանին կամ հարստին,
Բացեիբաց հեռանում են, որ սորա մոտ չի նըստին,
Այլ նստում են նորա մոտը, որի ջիբը ոսկի կա,
Չեն ամաչիլ աստված ասել հարստին, թե խոսքի գա…
Ասա՛, խնդրեմ, ինչո՞վ մեղավ այն խեղճ գիտուն պատանին,
Մի՞թե աղքատ աշխարհ գալը մարդիկ հանցանք համարին.
Դըղմագլուխ իշխանորդին ինչո՞ւ ի վեր դասեցավ,

Սոկրատեսի՞ արդյոք լեզվով հանկարծակի խոսեցավ…
Ահա՛, այսպես չարութենով լցրել ես դու աշխարհքը,
Մի՞թե չես գալ սարսափանքի՝ տեսնելով քո արարքը։

ԻՄ ՔՆԱՐԻՆ

Արի՛, քնա՛ր Ափրոտիտա, հնչե նորեն իմ ձեռքին,
Ինչո՞ւ ընդ վայր կախ ես կեցած դու գլխաքաշ մունջ պատին,
Ինձ պատվիրեց Անակրեոն լինել յուր ընտիր ժառանգ.
Եվ այն անմահ յուր տաղերուն տալ անընդհատ արձագանք.
Բայց ի՞նչ դու շուտ վհատեցար, կոշտ խուժանի խոսքերեն,
Որք եղել են միշտ անարդար հենց Արամի օրերեն.
Ուշ մի՛ դնիլ դատաստանին խակամիտ <հիմա>րին,
Թե չէ, դու էլ ընկնելու ես, խղճուկ սոխակի օրին.
Հնչե՛ ազատ, քեզ չէ դրած՝ ո՛չ նեղ սահման, ո՛չ կոպար,
Ձայնը դ ձրգե, դեպի երկինք, թող քեզ լսե դիփ աշխարհ,
Թո՛ղ ծիծաղի և կամ թո՛ղ լա, թո՛ղ սարսափի, զմայլի,
Իսկ անազատ մեր աստղիկը միշտ վառ ու վառ կրփայլի.
Նա կփայլի քանի ամպը նորան չի՛ ծածկել քողով,
Մի՛ զարհուրիլ, շուտ կրցրվի թեթև ամպը մեղմ հողմով,
Ա՛նձն իմ, օրհնե՛ այն աստվածը, որ շնորհել է քու բաժին՝
Ո՛չ գանձ, ո՛չ թագ, այլ յոթնաղի անուշ քնար մուսային:

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը:
Կամաց-կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն ամառ դարձնում են.
Միայն մեր խեղճ կյանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կըրկընվում է միշտ այսօր:
Ասպարեզիս նեղ է ճամփան ու փըշոտ,
Խեղճությունս համարում եմ ինձ ամոթ.
Իմ վիճակին կարեկցություն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կյանքումը դարդ չունի»:
Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու պես-պես,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես:
Երբ ես մըտա անհյուրընկալ այս աշխարհ,
Քանի որպե բախտը ժըպտաց ինձ պայծառ.
«Հա, ասացի, դարձել է իմ անիվը,
Լըրացել է իմ վատ բախտի չար թիվը»:
Հանկարծ՝ փըշեց անտուժելի հյուսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին.
Այսպես չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորույն վիճակը:
Ա՛խ, մոտեցիր, օրհասական օ՛ր մահվան,
Բե՛ր քու հետը սև հող ու նեղ գերեզման,

Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը հատակը,
Ծանր քարե՝ վրաս ծածկած վերմակը:
Բայց, ա՛խ, երբ որ կանցնի ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի,
Հետը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ հիշատակ – կըկորչին.
Բայց կուզեի թողնել այստեղ մի արձան,
Որ դարեդար մընար ամուր, անկործան…
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թե այնքան անգութ կլինի Լետա գետ,
Որ անունըս անգամ կանե նա անհետ:

ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐ

Նմանություն

Նվեր Սիմիոն Ամբարդանյանին

Մեզնից շա՛տ առաջ կար մի թագավոր,
Հոգվով դեռ արի, գլխով ալևոր,
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը,
Ուներ նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, մյուսը՝ գեղեցիկ:
Մի օր տգեղը ասաց մյուսին.
«Երթանք ծովի ափ, քույրի՛կ, միասին»:
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տրգեղը հետնից ոխ պահած սրտում.
Հազիվ թե ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրրոջ գրլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկե՛ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանյակ,
Ա՛ռ, էն քե՛զ լինի, պարգևե ինձ կյանք»…
– Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,

Ինձնից փրկություն դու բնավ մի՛ հուսալ: —
«Քուրի՛կ, թե այդ էլ քեզ չէ բավական,
Կուտամ քեզ ոսկի պըսակ պատվական»:
– Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկություն դու բնավ մի հուսալ: —
«Քուրի՛կ, մի թողնիլ դու ինձ անտերունչ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անտրտունջ»:
Տըգեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար:
Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջըկան…
Ջըրից հանեց, դըրեց ափի մոտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցավ, տեսավ աղջըկան,
Լացեց ու առավ, դըրեց ուսի վրան,
Տարավ իրա տուն այդ անգին գյուտը,
Չորացուց նորա մարմնու դիփ հյութը:
Գեղեցիկ տավիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հյուսեց մազերից.
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տավիղը ձեռքին:
Երբ մտավ դահլիճ շըքեղ զարդարած,
Տեսավ տըգեղին փեսի մոտ կայնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հյուրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հընչե՛ իմ տավի՛ղ, հնչե՛ համարձակ,
Հարազատ քույրըս խըլեց իմ պսակ.
Լըսե՛, իմ ծնո՛ղ, լըսե՛ սիրակա՛ն,
Հարազատ քույրս խլեց իմ փեսան.

Լըսե՛ ժողովու՛րդ, լըսե՛ անխըռով,
Հարազատ քույրըս գըլորեց ինձ ծով»:
Մյուս օր դահիճքը խարույկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մեջը գլորեցին.
Հուրը պըլպըլաց աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար աստված ինձ պատժեց»:

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ

Քու՛ն էղիր, պալաս, աչքդ խուփ արա,
Նախշուն աչքերուդ քուն թող գա վըրա.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Օսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,
Նարոտ կապիլ է ծարեն տեր-պապան.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Մավի հիլուններ կախիլ իմ ես ալ,
Նազար չիս առնուլ, քու՛ն եղիր, մի՛ լալ.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Աս քանի՞ մորըդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրոցքիդ քովը.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Օրոցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկըտան ծանով սիրտըս չի մաշիս.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Դուն ալ քու՛ն էղիր, ինծի ալ քուն տուր,
Սուրբ աստվածամայր (այս անունին) քուն տուր:
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

ԱՂԵՆ ՏԱ՞ՆՆ Է

(Նմանություն)

Զարմանք բան է, հենց գիտենաս
Աղեք տանը չեն նըստում,
Իսկի չելավ վուր մի գըթնիմ
Աղալոին իր տընում:

– Մի՛ արմանա, պարուն Սարգիս,
Էս աշխարքի ադաթին,
Իշխանք, գանա, դու խաբար չի՞ս,
Վուր քասիբին կու ատին:

Առ օրինակ, թե մեծավուր,
Ապալետնիրը ուսին,
Գա դըրան մոտ, հարցնե աղին,
«Տա՞նն է». – տանն է, կոսին:

Ներրա էդնից մի փեշաքար,
Էլի էն նոքրին հարցնե.
«Տա՞նն է աղեն». կընձին տալով
Խեղճին իսկույն դուս կոնե:

Թե աղի մոտ լավ շուրերով

Կու գաս՝ տանը կու գըթնիս.
Վա՛յ թե չուխեդ հընացած է,
Լավն էս է, տուն չի մըտնիս:

Թե սալոպով աղջիկ պարոն
Կու գա՝ թող ներս հրամայե,
Թե ղաթիպով պառավ Ձալոն
Հարցնե՝ կոսին տանը չէ:

Թե վուր ձեռիդ քիսա բըռնած,
Պարոնին փուղ բերիլ իս,
Փառք ու պատվով ներս մըտնում իս,
Գլխի վրա տիղ ունիս:

Թե դուքանդար իս, հիսաբով
Փուղի էդնից իս էկի,
«Տա՞նն է աղեն». կոսին – հալա
Ժամիցը տուն չի էկի:

Էս է հիմիկվա ադաթը.
Կուզիս ջիգրից տըռաքի.
Թե քասիբ իս՝ ջուրը նընկի,
Թե խոջա իս՝ տու՛ն մըտի:

ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,
Եվ կամ՝ որի մականունը հանգում է յան մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տոլմա ու փըլավ,
Կամ՝ պարծանոք միշտ հագնում է հայի գըդակ ու հալավ:

Ո՞վ է հայը, մի՞թե նա է, որ գընում է հայի ժամ,
Ու տարենը հաղորդվում է խիստ սակավից՝ չորս անգամ,
Որ կյանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նույնպես,
Հորանջելիս խաչ է կընքում՝ բաց բերանն ու երես:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ տեսնելիս տերտերին
«Օրհնյա ի տեր» պատրաստ ունի ամեն րոպե իր բերնին,
Որի համար մեծ ամոթ է, նաև մեղք է մահացու,
Թե զատիկի թաթախմանը չուտե թերխաշ կարմիր ձու:

Չէ, սի՛րելիս, ազգությունը չէ արտաքին արարմունք,
Հայ ծընելըդ անգամ չի տալ քեզ հայության իրավունք,
Ով կամ թե յան մականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձվով կամ թե անձու կատարում ես զատիկը:

Քալլա-փաչա կամ թե բորշ է ամեն օրվա կերածըդ,
Սեռտուկ, պայլտո կամ թե չուխա է վըրայի հագածըդ —
Ողջը մին է. ծեսով չես տալ ազգիդ վընաս կամ օգուտ,
Տեղը մընա ազգությունը, այդ նաև վարձ չէ հոգուդ:

Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի հուսո աստղը քեզ համար.
Օտարինը դու մի ատիլ, մի էլ սիրիլ կուրորեն,
Բայց դու հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն:

Արվեստ, ուսում, շրքեղարվեստ տարածե՝ հայ ազգի մեջ,
Բայց բընությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.
Քեզ ի՞նչ շահ է, թե դու կասես՝ հոգին բըխել է հորից,
Կամ թե որդին հոգվով սրբով անսերմ ծընունդ է մորից…

Թող, սիրելի, այդ խընդիրքը, աչքդ դարձուր դեպ հարավ,
Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառով,
Բայց մինչ այսօր այդ խընդիրքը մընացել է անվրճիռ,
Թույլ խելքո՞վրդ աշխատում ես քակել անքակ այդ կընճիռ:

Սիրե՛ ազգրդ ոչ լոկ խոսքով, սիրե ինչպես քու անձը,
Նորա օգտին, թե պետք լինի, գոհե բոլոր քո գանձը.
Մի խնայիլ կյանքրդ անգամ, արյունրդ բեր նորան գոհ.
Ոչ այն հուսով, որ քու ազգը իսկույն լինի քեզնից գոհ:

Իստակ սերը չի պահանջում ամենևին տըրիտուր,
Թե տվածը ետ առնվի՝ դորան կասեն առուտուր.
Բայց վայ նոցա, որք անրզգա են յուր ազգի վիճակին,
Հազար անեծք նոցա վերա, էրնեկ շան պես սատակին:

Թե դու հայ ես՝ գիտե՞ս արդյոք՝ ով էր ազգիդ նախահայր,
Ո՞րտեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգիս համար հայ աշխարհ.
Քանի՞ տարի անկախ մընաց հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից:

Ո՞ւր ցըրվեցավ քու խեղճ հայը, ունի՞ այժըմ օգնական,
Կա՞ մի հընար, միջոց կամ հույս սորա կրկին նորոգման,
Թե կա հընար՝ դու պատրա՞ստ ես անձըդ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտըտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարավ միշտ տանել:

Դու պատրա՞ստ ես թողնել կայքըդ, ծնողք, եղբարք սիրական,
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան.
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ:

Այդ ժամանակ քեզ Հայ կասեմ…

Բայց թե փորըդ տոլմաներից կամ փըլավից տըռաքի,
Հավատացի՛ր, ուտելովդ օգուտ չես բերիլ ազգի:

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Նվեր Գևորգ Քանանյանին

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Ալյաց մեջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ հեղհեղուկ,
Պըղտոր ջրով եզերքին
Դարիվ-դարիվ խփելով
Փախչում էին լալագին:

– «Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սըգավոր ես ինձ նըման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սեգ, հրպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

Մի՛ պըղտորիլ հատակըդ,

Հանդարտ հոսե խայտալով,
Մանկությունը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դեպի ծով:

Վարդի թրփեր թող բըսնին
Քու հյուրընկալ ափի մոտ,
Սոխակները նոցա մեջ
Երգեն մինչև առավոտ:

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մեջ քու ջըրին
Ճկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մոտ երգելու
Հովիվք թող գան համարձակ, —
Գառն ու ուլը քու վրճիտ
Ջուրը մըտնին միշտ արձակ»:

Մեջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպես խոսեց հատակից.

– Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցավերը բյուրավոր:

Սիրելիի մահից ետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պըճնվի
Իր զարդերով թանկագին:

Որի՞ համար զարդարվիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,
Ճատերն ինձ են ատելի,
Ճատերին ես օտար եմ…

Իմ ազգակից գիժ Քուռը,
Թեև այրի ինձ նման,
Ստրկորեն կրում է
Գայթակղիչի կուռ շղթան:

Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես հայ, հայիս կճանչնամ,
Օտար փեսա չուզելով,
Ես միշտ այրի կմնամ:

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շըքեղազարդ հարսի պես
Հազար ու բյուր պըչրանքով,
Փախչում էի ափերես:

Հատակս պարզ ու վճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջրիս միջին էր լողում:

Ի՞նչրս մնաց էն օրից,
Ո՞ր ջրրամոտ գեղերրս,
Ո՞րը իմ շեն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերրս:

Տուրքը ջրրի ամեն օր
Իր սուրբ ծոցին Արարատ
Մայրախրնամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ:

Բայց ես այս սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբյուրին
Պիտի ցողեմ արտորա՞յքն
Իմ ատելի օտարին:

Մինչ իմ որդիք, – ո՞վ գիտե —
Ծարավ, նոթի, անտերունչ
Օտար աշխար հածում են
Թույլ ոտքերով կիսաշունչ…

Հեռու՛, հեռու՛ քրշեցին
Բնիկ ազգրն իմ հայկյան,
Նորա տեղը ինձ տվին
Ազգ անկրոն, մոլեկան:

Դոցա՞ համար զարդարեմ
Իմ հյուրրնկալ ափերը,
Եվ կամ դոցա՞ հրապուրեմ

Ճրպռոտ, պրլշած աչերը:

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մընան պանդուխտ, —
Ինձ միշտ սրգվոր կը տեսնեք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ…»:

Էլ չի խոսեց Արաքսը,
Հորձանք տվեց ահագին,
Օղակ-օղակ օձի պես
Առաջ սողաց մոլեգին:

ՆԿԱՐԻՉ

Նվեր Հովհաննես Պատկանյանին

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մրտքով մոլորած,
Ներկ ու վրձիններ ցիր ու ցան առաջիդ,
Վշյա կըտավը քու հանդեպ փրռած:

Շո՛ւռ տուր աչերդ, նայե՛ դես ու դեն
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը,
Զարթի՛ր, սիրելի, այդ անուշ քընեն,
Գոնե մի անգամ հանե՛ քու ոխը:

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին…
Հանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորհքով,
Հրսկայի սիրտըդ թընդաց խիստ ուժգին:

Առիր վրձինը, թաց արիր ներկով,
Շունչ տվիր անշունչ կոպիտ կըտավին.
Երկնից խորհուրդը մեկնեցավ քեզմով,
Քեզ անկարելին անհայտ է բնավին:

Սեր, ատելություն, հանճար, բարկություն

Տըվիր պատկերին մատիդ շարժվածքով,
Ինչ որ չի հայտնեց ճարտարի լեզուն,

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.